



Թերապիստներ Հայաստանի համար, Հայ-ամերիկյան սպորտային բժշկության դաշինքը և Մասնագիտական զարգացման միջազգային կենտրոնը անցկացնում են

Հետպատերազմյան վերականգնողական բուժում Վիրտուալ սիմպոզիում

“Անհաջողությանը պետք է դիմակայել, աճել և հաղթահարել”



Դասընթացի ձևաչափը՝ Zoom հարթակ

Ամսաթիվ՝ հուլիս 17 - 18, 2021թ

Տևողություն՝ 2 օր

- **շաբաթ, հուլիսի 17-ին, ժամը՝** 18:30 - 22:30 Երևանի ժամանակով
- **կիրակի, հուլիսի 18-ին, ժամը՝** 18:30 - 22:00 Երևանի ժամանակով

Թիրախային լսարան

Վերականգնողաբաններ, ֆիզիոթերապիստներ/օգնականներ,

Էրգոթերապիստներ/օգնականներ, խոսքի և լեզվի թերապիստներ, Նյարդաբաններ,

Նյարդավիրաբույժներ, բուժքույրեր, հոգեբույժներ, հոգեբաններ, ընտանեկան բժիշկներ

Ակնարկ

2020թ. արցախյան պատերազմն էլ ավելի ծանրաբեռնեց Հայաստանի առողջապահական համակարգը COVID-19 համավարակի պայմաններում կազմակերպելով հազարավոր վիրավոր մարտիկների և փախստականների բժշկական օգնությունը: 2020թ. սեպտեմբերի պատերազմի առաջին իսկ օրերից մեր կազմակերպությունները տարբեր միջոցառումներ են ձեռնարկել՝ համակարգելով վերականգնողական մասնագետ-կամավորների Հայաստան ուղևորումը, բժշկական պարագաների հավաքագրումն ու ուղարկումը, հեռահար կլինիկական վեբինարների անցկացումը՝ պատերազմի վնասվածքների գնահատման և բուժման նպատակով, Հայաստանի բժիշկների և վերականգնողական մասնագետների հետ խորհրդատվությունների անցկացումն ու թվային տեղեկատվության տրամադրումը:

Տարածաշրջանային և միջազգային համագործակցությունն էլ ավելի զարգացնելու նպատակով մենք կազմակերպել ենք Հետպատերազմյան վերականգնողական բուժման վիրտուալ սիմպոզիումը, որը տեղի կունենա 2021թ. հուլիսի 17-ին և 18-ին: Ակնկալում ենք հետագա համագործակցություն և ջանքեր՝ Հայաստանում զարգացնելու վերականգնողական բուժման ծառայություններն ու կարողությունները:

Մեր նպատակն է՝

- խթանել Հայաստանի և Արցախի միջմասնագիտական բուժաշխատողների համագործակցությունը՝ հաղթահարելու հետպատերազմյան մարտահրավերները,
- նպաստել Հայաստանի և Արցախի առողջապահական ծառայություններ մատուցողների և վերականգնողական միջազգային փորձագետների միջև կապերի հաստատմանը՝ կիսելու ապացույցների վրա հիմնված բուժման մեթոդները և զարգացնելու տեղական կարողությունները,
- նպաստել տեղական վերականգնողական մասնագետների իրենց փորձն ու հմտությունները ներկայացնելուն միջազգային հարթակներում՝ իրագեկելու հետպատերազմյան Հայաստանի և Արցախի յուրահատուկ մարտահրավերներին:

Գրանցում

Մասնագետներ (Հայաստան և Արցախ)	Անվճար
Ուսանողներ (Հայաստան և Արցախ)	Անվճար
Մասնագետներ (Միջազգային)	\$ 60
Ուսանողներ (Միջազգային)	\$ 40

Հասույթը կուղղվի Թերապիստներ Հայաստանի համար և Հայ-ամերիկյան սպորտային բժշկության դաշինքի առաքելությունների իրականացմանը.

Գրանցվել. [Հետպատերազմյան վերականգնողական բուժում](#)

Ուղեցույց. Գրանցվողները նախապես էլ. փոստի միջոցով կստանան մանրամասն հրահանգներ՝ ինչպես միանալ սիմպոզիումին: Հրահանգները կուղարկվեն icpdarmenia@gmail.com հասցեից այն հասցեին, որն օգտագործել եք գրանցվելիս:

Կրեդիտներ. Տրամադվելու են հայկական ՇՄՁ կրեդիտներ: Միջազգային մասնակիցները կարող են դիմել տեղական համապատասխան մարմիններին՝ դրանք փոխակերպելու համար:

Լեզու. Սիմպոզիումն անցկացվելու է անգլերեն լեզվով՝ հայերեն միաժամանակյա թարգմանությամբ:

Մոդերատորներ. Արմինե Բաբիկյան, հավաստագրված Էրգոթերապիստ; Լուսինե Կարապետյան, հավաստագրված ֆիզիոթերապիստ

ՕՐԱԿԱՐԳ

Շաբաթ, հուլիսի 17, 2021թ.

18:15-18:30	Գրանցում/Մուտք
18:30-18:40	Ողջույնի խոսք Արմինե Բաբիկյան (Թերապիստներ Հայաստանի համար) Նիկոլաս Թավուկչյան (Հայ-ամերիկյան սպորտային բժշկության դաշինք)
18:40-19:00	<i>Հիմնական զեկույց.</i> Ռեաբիլիտացիայի դերը աղետային իրավիճակում օգնություն ցուցաբերելիս Պիտեր Սկեյլթն (Առողջապահության համաշխարհային կազմակերպություն)
19:00-19:10	Կենդանի փորձ – Պատերազմի և հետպատերազմյան ընթացքում Հայաստանի վերականգնողական բուժման SWOT վերլուծություն Լիանա Աղաջանյան (Արաբկիր Բժշկական կենտրոն)
19:10-19:30	Ռազմավարություններ անհետածգելի վերականգնողական բուժման և արդյունքների բարելավման համար Ջիմ Սմիթ (Ութիկա քոլեջ) Ալան Լի (Mount Saint Mary's համալսարան) Հայի Ժելեզնիկ (Պիցբուրգի համալսարան)
19:30-19:50	Վերքի խնամք և այլընտրանքային միջոցներ անբավարար պայմաններում Մելիսա Ջոնսոն (Ամերիկյան ֆիզիոթերապիայի ասոցիացիայի Վերքի խնամքի Հատուկ ուսումնասիրության խումբ) Պատրիսիա Լարկին-Ափթն (Ամերիկյան ֆիզիոթերապիայի ասոցիացիայի Վերքի խնամքի Հատուկ ուսումնասիրության խումբ)
19:50-20:10	Հարց ու պատասխան
20:10-20:30	Հայելային թերապիա և ցավի կառավարում վերջույթների կորստի ժամանակ Դոն Նիլսն (Կոլումբիայի համալսարան)
20:30-20:50	Գլխուղեղային վնասվածքից հետո ճանաչողական խանգարումներ և փոխհատուցման ռազմավարություններ Մարի Հադսն-ՄաքՔիննի (Azusa Pacific համալսարան)
20:50-21:10	Հարց ու պատասխան
21:10-21:20	ԸՆԴՄԻՋՈՒՄ

Պանելային քննարկում. Գլխուղեղի վնասվածքի ազդեցությունը տեսողական, շարժողական և լեզվական հմտությունների վրա
Քերըն Արանհա (Սուրբ Ավգուստին Բժշկական գիտությունների հմալսարան)
Նաիրի Ադեսյան (Արևմտյան Լոս Անջելեսի վետերանների բժշկական կենտրոն)
Թայլին Բորոյան (Բոստոնի բժշկական կենտրոն)
Մոդերատոր. Մարի Հադսն-ՄաքՔիննի

22:05-22:20 Հարց ու պատասխան

22:20-22:30 *Փակման խոսք* **Արմինե Բաբիկյան**

Կիրակի, հուլիս 18, 2021թ.

18:15-18:30	Գրանցում/Մուտք
18:30-18:35	Ողջույնի խոսք Արմինե Բաբիկյան (Թերապիստներ Հայաստանի համար)
18:35-18:55	<i>Հիմնական զեկույց.</i> Ռեաբիլիտացիա շարունակական խնամքի միջոցով Միշել Լանդրի (Դյուբի համալսարան)
18:55-19:05	Q&A
19:05-19:25	Գրագետ առողջություն և հիվանդի իրավունքների ու հնարավորությունների պաշտպանում Մելանի Լիվալյոր (Շերբրուքի համալսարան)
19:25-19:45	Ողնաշարի վնասվածքից հետո անցում դեպի տնային պայմաններ և կյանք Միշել Սովթալ (Սուրբ Ավգուստին Բժշկական գիտությունների հմալսարան)
19:45-20:05	Հարց ու պատասխան
20:05-20:15	ԸՆԴՄԻՋՈՒՄ
20:15-21:15	Պանելային քննարկում. Ռազմավարություն մարտական վնասվածքից հետո համայնքում վերաինտեգրման համար Անի Ենգիբարյան (Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ) Ջենիֆեր Թոմսոն (Սփոլդինգ վերականգնողական կենտրոն) Նաթալի Հալաջյան (Արևմտյան Լոս Անջելեսի վետերանների բժշկական կենտրոն) Օշին Վարդանյան (Տորոնտոյի համալսարան) Մոդերատոր. Նաիրի Ադեսյան
21:15-21:35	Հարց ու պատասխան
21:35- 21:50	<i>Հայաստան և Սփյուռք համագործակցություն</i> Արմինե Բաբիկյան (Թերապիստներ Հայաստանի համար) Նիկոլաս Թավուկչյան (Հայ-ամերիկյան սպորտային բժշկության դաշինք)
21:50-22:00	<i>Փակման խոսք</i> Արմինե Բաբիկյան (Թերապիստներ Հայաստանի համար)

Հովանավորներ



Գիտական կոմիտե

Արմինե Բաբիկյան, Նիկոլաս Թավուկչյան, Քորին Օգբեկ, Լուսինե Կարապետյան, Ադամ Բաբիթս, Մելիսա Անահիվերդյան, Մելիսսա Քոուկ